ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» հունիսի 2022թ. № 416

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ 0,040 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐԻ ԼԱՄԲԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դավիթ Գրիգորի Լամբարյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի Թորոսյան փողոցի 06-006-0494-0023 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,04000 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 2000 թվականին կառուցված բնակելի տունը, ավտոտնակը և մառանը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով Ա/Ձ <<Գասպար Վեքիլյան>> ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Կադաստրի կոմիտեի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006PTWJ3NI) և Դավիթ Գրիգորի Լամբարյանի

դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել՝ Դավիթ Գրիգորի Լամբարյանի (ծնված 28.09.1982թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Թորոսյան փողոցի վրա գտնվող 06-006-0494-0023 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,04000 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և դրա վրա կառուցված 8,49 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 5,70 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 20,16 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի և 12,24 քառակուսի մետր մակերեսով մառանի նկատմամբ:

2. Հաստատել Սպիտակ համայնքի Թորոսյան փողոցի վրա գտնվող Դավիթ Գրիգորի Լամբարյանի պատկանող 06-006-0494-0023 կադաստրային ծածկագրով, 0,04000 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք.Սպիտակ Շ.Թորոսյան փողոց, թիվ 167» հասցեն:

4.Սույն որոշմամբ ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

5.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունիսի 13
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» հունիսի 2022թ. № 417

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի ԹԻՎ 84 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի մայիսի 26-ի թիվ 84 որոշման մեջ Սուրեն Վարդանի Մխոյանի անունը սխալմամբ գրվել է «Սուրիկ», հիմք ընդունելով Սուրեն Վարդանի Մխոյանի մահվան մասին պետական վկայականը և Սարգիս Սուրենի Մխոյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի մայիսի 26-ի «Սպիտակ քաղաքի Այգեստան, Շահումյան, Տեր Սիմոնյան, Մուրացան, Շիրակի խճուղի, Երևանյան խճուղի և Գործարանային փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 84 որոշմանը կից ցուցակի 205-րդ տողում գրված «Սուրիկ» բառը փոխարինել «Սուրեն» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունիսի 13
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» հունիսի 2022թ. № 418

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԹԻՎ 401 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 7-ի թիվ 401 որոշման 1-ին կետում Աղունիկ Կալիկի Ոսկանյանի հայրանունը սխալմամբ գրվել է «Կոլիկի»՝, հիմք ընդունելով Աղունիկ Կալիկի Ոսկանյանի անձնագիրը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 7-ի «Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրում գտնվող 06-021-0052-002 կադաստրային ծածկագրով 0,116 հեկտար մակերեսով հողամասին հասցե տրամադրելու մասին» թիվ 401 որոշման 1-ին կետում գրված «Կոլիկի» բառը փոխարինել «Կալիկի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունիսի 13
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» հունիսի 2022թ. № 419

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի ԹԻՎ 397 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 6-ի թիվ 397 որոշման 1-ին կետում Աղունիկ Կալիկի Ոսկանյանի հայրանունը սխալմամբ գրվել է «Կոլիկի»՝ հիմք ընդունելով Աղունիկ Կալիկի Ոսկանյանի անձնագիրը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 6-ի «Սպիտակ համայնքի Արևաշող բնակավայրում գտնվող 06-021-0044-0031 կադաստրային ծածկագրով 0,147 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինություններին հասցե տրամադրելու մասին» թիվ 397 որոշման 1-ին կետում գրված «Կոլիկի» բառը փոխարինել «Կալիկի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունիսի 13
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» հունիսի 2022թ. № 420

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՆՐԱԳՈՐԾՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍ, ԹԻՎ 250 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՄԿՐՏԻՉ ՌՈՒԲԻԿԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 828-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգի 2-րդ և 10-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11082021-06-0050 վկայականը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2022 թվականի հունիսի 10-ի թիվ 01/111.6/05152-2022 գրությունը և Մկրտիչ Ռուբիկի Թովմասյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մկրտիչ Ռուբիկի Թովմասյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի «Պանրագործների թաղամաս, թիվ 250» հասցեում գտնվող, 06-006-0053-0003 կադաստրային ծածկագրով 0,0874 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և դրա վրա գտնվող 89,1 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան (գրասենյակ), 46,2 քառակուսի մետր մակերեսով շինության (բնակելի տուն), 32,2 քառակուսի մետր մակերեսով շինության (պահեստ) և 59,5 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի գործառնական նշանակությունը փոփոխել՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Զոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունիսի 13
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2022թ. № 421

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՌՈԲԵՐՏ ՍԱՐԳՍԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1953971 վկայականը, Կադաստրի Կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006VXJE2CA), Ռոբերտ Սարգսի Հովակիմյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ռոբերտ Սարգսի Հովակիմյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 06-006-0272-0035 կադաստրային ծածկագրով 0,032 հա մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 46» հասցեն (փոստային դասիչ՝ 1801):

2. Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունիսի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2022թ. № 422

ՍԱՆԴՐՈ ՍԱՆԴՐՈՅԻ ՈՒՌՈՒՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Սանդրո Սանդրոյի ՈՒռուսյանի կողմից շինություն ինքնակամ կառուցելու վերաբերյալ վարչական իրավախախտման գործի քննության օր նշանակել 2022 թվականի հունիսի 22-ին, ժամը 15:00-ին:

2. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցել Սանդրո Սանդրոյի ՈՒռուսյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունիսի 16
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2022թ. № 423

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի բնակիչների դիմումները և սոցիալական հարցերի հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 13-ի թիվ 7 արձանագրությունը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Այլ սոցիալական ծրագրեր» գործառական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածից Սպիտակ համայնքի բնակիչներին հատկացնել դրամական օգնություն ընդամենը 345 000 (երեք հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունիսի 16
ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2022թ. հունիսի 16-ի թիվ 423 որոշման

Դրամական օգնություն ստացող քաղաքացիների ցուցակ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Սոց. քարտի համարը	Անձնագրային տվյալները	Գումարը ՀՀ դրամ
1	Վարդուհի Վարդանյան	5614500332	AN0730734, տրված 28.11.2013թ., 052-ի կողմից	15 000
2	Նորիկ Առաքելյան	3912600171	AN0750738, տրված 19.12.2013թ., 052-ի կողմից	15 000
3	Անգին Հախվերդյան	6204780069	AM0796866, տրված 06.07.2012թ., 052-ի կողմից	15 000
4	Հեղինե Փիլոյան	7805650268	AU0288183, տրված 27.05.2021թ., 052-ի կողմից	15 000
5	Շողիկ Պետրոսյան	6809660569	AT0590656, տրված 18.11.2020թ., 052-ի կողմից	15 000
6	Նարինե Եղիազարյան	5205680105	007956394, տրված 16.09.2015թ., 052-ի կողմից	15 000
7	Վարսենիկ Թումասյան	7907680093	005611819, տրված 13.01.2014թ., 052-ի կողմից	15 000
8	Համեստ Համբարյան	5110600112	000892976, տրված 02.10.2012թ., 052-ի կողմից	15 000
9	Անուշ Ավալյան	7407860122	AR0637892, տրված 04.05.2022թ., 052-ի կողմից	15 000
10	Գոհար Քոթանջյան	5509650133	AM0827912, տրված 23.03.2018թ., 052-ի կողմից	15 000
11	Ռայա Բաղդասարյան	6912840418	008180929, տրված 09.08.2016թ., 052-ի կողմից	15 000
12	Թերեզա Դունամալյան	5310830251	008235319, տրված 11.09.2017թ., 052-ի կողմից	15 000
13	Արմինե Ավետիսյան	8123020521	010327757, տրված 17.10.2018թ., 039-ի կողմից	15 000
14	Արմեն Պետրոսյան	1402780036	AS0544283, տրված 18.03.2019թ., 052-ի կողմից	15 000
15	Քրիստինե Ասատրյան	7101800203	AN0590056, տրված 29.07.2013թ., 052-ի կողմից	15 000
16	Գևորգ Պապիկյան	2701790050	AS0617506, տրված 24.05.2019թ., 052-ի կողմից	15 000
17	Գոհար Հարությունյան	6309370057	AN0246328, տրված 06.11.2012թ., 052-ի կողմից	15 000
18	Միհեր Պետրոսյան	4108530241	AN0334528, տրված 21.01.2013թ., 052-ի կողմից	15 000
19	Մերոբ Պետրոսյան	1211890155	002940518, տրված 27.10.2015թ., 052-ի կողմից	15 000
20	Գագիկ Սանթրոսյան	1110650373	AR0590593, տրված 14.02.2018թ., 052-ի կողմից	15 000

21	Սվետլանա Մկրտչյան	7408540210	007077548, տրված 26.08.2015թ., 052-ի կողմից	15 000
22	Անժելա Մատինյան	5803680206	AM0785862, տրված 04.07.2012թ., 052-ի կողմից	15 000
23	Հասմիկ Ամիրբեկյան	7702750154	004155164, տրված 03.06.2014թ., 052-ի կողմից	15 000

Ընդամենը՝ 345 000 (երեք հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2022թ. № 424

«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳԱՎԱԹ-2022» ՖՈՒՏԶԱԼԻ ՓՈԽԱՆՑԻԿ ԳԱՎԱԹԻ ՄՐՑԱՇԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքում կազմակերպել «Սպիտակ համայնքի ղեկավարի գավաթ-2022» ֆուտզալի փոխանցիկ գավաթի մրցաշար:

2. Հաստատել «Սպիտակ համայնքի ղեկավարի գավաթ-2022» ֆուտզալի փոխանցիկ գավաթի մրցաշարի անցկացման կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունիսի 16
ք.Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2022 թվականի հունիսի 16-ի թիվ 424 որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«Սպիտակ համայնքի ղեկավարի գավաթ-2022» ֆուտզալի փոխանցիկ գավաթի մրցաշարի անցկացման

1. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է «Սպիտակ համայնքի ղեկավարի գավաթ-2022» ֆուտզալի փոխանցիկ գավաթի մրցաշարի (այսուհետ՝ Մրցաշար) կազմակերպման և անցկացման սկզբունքները, սուբյեկտների իրավունքները և պարտականությունները, պատասխանատվությունը և այլ ընթացակարգային հարցերը տվյալ մրցաշարի ընթացքում, կարգավորվում է Մրցաշարին մասնակցող թիմերի իրավունքներն ու պարտականությունները:

2" Կանոնակարգի խնդիրներն են՝

ա) Մրցաշարի կազմակերպման, անցկացման, ղեկավարման և հսկողության ընթացակարգերի սահմանումը,

բ) Մրցաշարի մասնակիցների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և ապահովումը:

2. ՄՐՑԱՇԱՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

3. Մրցաշարի նպատակն է ֆուտզալի մասսայականացումը և զարգացումը Սպիտակ համայնքում:

3. ՄՐՑԱՇԱՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4" Մրցաշարին մասնակցելու իրավունք ունեն Սպիտակ համայնքում գործունեություն ծավալող պետական և համայնքային ենթակայությամբ հիմնարկների և կազմակերպությունների կողմից ձևավորված թիմերը, Սպիտակ համայնքում հաշվառված (գրանցված) և գործունեություն ծավալող իրավաբանական անձանց (կազմակերպություններ) կողմից ձևավորված թիմերը, ինչպես նաև անհատների կողմից ձևավորված թիմերը:

5. Յուրաքանչյուր թիմ պետք է ունենա անվանում: Թիմերի անվանումները չպետք է կրկնվեն:

6"Մրցաշարին մասնակցող թիմերի խաղացողներ կարող են լինել Սպիտակ համայնքի հաշվառում ունեցող 18 տարին լրացած անձինք:

7" Մրցաշարին մասնակցելու համար թույլատրվում է հայտավորել մինչև 12 խաղացող և 1 ներկայացուցիչ:

8. Յուրաքանչյուր խաղին կարող է հայտագրվել 5 հիմնական և 7 պահեստային խաղացող: Թիմերին թույլատրվում է կատարել անսահմանափակ փոխարինում:

9. Մրցաշարի մասնակցության հայտերը (Ձև 1) թիմերի խաղացողների անձնագրերի պատճենների հետ միասին ներկայացվում են Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժին:

10. Հայտը պետք է ստորագրված լինի թիմի ներկայացուցչի կողմից:

11. Հայտերի ընդունումն ավարտվում է Մրցաշարն սկսվելու օրվանից երկու աշխատանքային օր առաջ:

12. Հայտերը գրանցվում են հայտերի գրանցման մատյանում:

13. Սույն գլխի պայմաններին չհամապատասխանող հայտերը, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ ներկայացված հայտերը ենթակա չեն գրանցման:

4. ՄՐՑԱՇԱՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

14. Մրցաշարը կազմակերպում և անց են կացնում Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժինը և գլխավոր մրցավարը:

15. Մրցաշարի գլխավոր մրցավարն է Էդիկ Բարսեղի Բարսեղյանը:

16. Մրցաշարն անց է կացվում 2022 թվականի հունիսի 29-ից հուլիսի 15-ը:

17. Եզրափակիչ խաղն անց է կացվելու 2022 թվականի հուլիսի 15-ին: Խաղի անցկացման ժամը կհայտարարվի խաղից մեկ օր շուտ:

18. Երրորդ տեղի համար խաղն անց է կացվելու 2022 թվականի հուլիսի 15-ին: Խաղի անցկացման ժամը կհայտարարվի խաղից մեկ օր շուտ:

19. Մրցաշարն անց է կացվում Սպիտակ համայնքի Սպիտակ, Ջրաշեն, Շիրակամուտ և Արևաշող բնակավայրերում:

20. Թիմերը ըստ մասնակցության հայտերի քանակի վիճակահանության արդյունքներով կբաժանվեն համապատասխան խմբերի: Վիճակահանության ժամանակ որոշվում են նաև խաղերի անցկացման վայրերը և ժամանակացույցը՝ բացառությամբ երրորդի տեղի համար և եզրափակիչ խաղերի:

21. Վիճակահանությունն անց է կացվում հայտերի ընդունման ժամկետի վերջին օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 12-ին Սպիտակի համայնքապետարանում:

22. Յուրաքանչյուր թիմ անց է կացնում մեկական խաղ իր խմբում գտնվող մյուս բոլոր թիմերի հետ:

23. Ըստ միավորների հաշվարկի խմբում 1-ին և 2-րդ տեղերն զբաղեցրած թիմերը անցնում են հաջորդ փուլ, որն անց է կացվում օլիմպիական ձևաչափով՝ մինչև եզրափակիչ խաղ: Հիմնական ժամանակում ոչ-ոքի ավարտվելու դեպքում հաղթողին ի հայտ բերելու համար նշանակվում է լրացուցիչ 10 րոպե խաղ 2 խաղակեսից /5-5/: Եթե լրացուցիչ

ժամանակը ևս ավարտվում է ոչ ոքի, ապա այդ դեպքում նշանակվում է 11 մետրանոց հարվածաշար:

24. Յուրաքանչյուր խաղի արդյունքներով գրանցած հաղթանակի համար թիմին շնորհվում է 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1 միավոր, իսկ պարտության դեպքում միավոր չի շնորհվում:

25. Յուրաքանչյուր խմբում երկու և ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում թիմերի դասակարգման ժամանակ առավելությունն՝ ըստ ստորև նշված հերթականության, տրվում է այն թիմին, որը՝

ա) հավակնորդ թիմերի միջև խաղերում վաստակել է ավելի շատ միավոր,

բ) հավակնորդ թիմերի միջև խաղերում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,

գ) հավակնորդ թիմերի միջև խաղերում խփել է ավելի շատ գոլ,

դ) խմբում կայացած բոլոր խաղերում ունի ավելի շատ հաղթանակ,

ե) տվյալ խմբի բոլոր խաղերում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,

զ) ընտրվել է վիճակահանությամբ:

26. Խաղը բաղկացած է 20 րոպե խաղաժամանակով 2 խաղակեսից և խաղակեսերի միջև ընկած մինչև 10 րոպե ընդմիջումից:

27. Չկայացած կամ անավարտ են համարվում այն խաղերը, որոնք, համապատասխանաբար, չեն կայացել կամ ընդհատվել են և չեն շարունակվել հետևյալ պատճառներից որևէ մեկի հիմքով՝

ա) եղանակային անբարենպաստ պայմաններ,

բ) ֆորս-մաժորային իրավիճակ,

գ) երրորդ անձանց միջամտություն, որն էականորեն խոչընդոտում կամ անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,

դ) թիմի կողմից խաղադաշտի լքում

ե) թիմի ֆուտբոլիստի, անձնակազմի և/կամ երկրպագուի անկարգապահ վարքագիծ, որն անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,

զ) հասարակական կարգի այնպիսի խախտում, որն անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,

է) թիմի կազմում 3-ից պակաս ֆուտբոլիստների առկայություն,

ը) անկանխատեսելի հանգամանք, որն անհնար է դարձնում խաղի մեկնարկը, ընթացքը և/կամ շարունակությունը կամ ազդում է խաղի արդյունքի վրա:

28. Խաղը չկայացած կամ անավարտ համարելու մասին որոշումը կայացնում է խաղի մրցավարը:

29. Եթե խաղը չի կայացել կամ ընդհատվել ու չի շարունակվել սույն կանոնակարգի 25-րդ կետի «ա» կամ «բ» ենթակետերի հիմքով՝ անկախ թիմերի կամքից, ապա այն տեղի է ունենում կամ շարունակվում է հաջորդ օրը՝ խաղի ընդհատման րոպեին հաջորդող րոպեից: Եթե հանդիպումը չի կարող նշանակվել հաջորդ օրը, ապա խաղի մրցավարը նշանակում է հանդիպումը մեկ այլ օր կամ օրացուցային պահեստային օր:

30. Տեղափոխված հանդիպման անցկացման վայրը մնում է անփոփոխ: Եթե որոշակի հանգամանքներով պայմանավորված հնարավոր չէ խաղն անցկացնել նախանշված վայրում, ապա խաղի մրցավարը պետք է հանդիպումը վերանշանակի սույն կանոնակարգով սահմանված մեկ այլ մարզադաշտում:

31. Սույն կանոնակարգի 25-րդ կետի «դ»-ից «ը» ենթակետերով ամրագրված հիմքերով խաղն ընդհատվելու կամ չկայանալու դեպքում մեղավոր թիմի հաշվին գրանցվում է տեխնիկական պարտություն 0-3 հաշվով, իսկ մրցակցի հաշվին՝ տեխնիկական հաղթանակ 3-0 հաշվով: Եթե խաղն ընդհատվել կամ չի կայացել երկու թիմերի մեղավորության կամ դիտավորության պատճառով, ապա երկու թիմերին գրանցվում է տեխնիկական պարտություն 0-3 հաշվով:

32. Եթե թիմերի ֆուտբոլիստների կողմից դրսևորվել է այնպիսի անվայել վարքագիծ, որն անհնար է դարձրել խաղի մեկնարկը կամ շարունակությունը, ապա խաղը համարվում է կայացած, բայց թիմերի հաշվին միավոր չի գրանցվում:

33. Անավարտ կամ չկայացած խաղի ընդհատվելու կամ չկայանալու պատճառը, ժամանակը և հաշիվը գրանցվում են տվյալ խաղի արձանագրության մեջ:

34. Մասնակից թիմերը պարտավոր են ժամանել մարզադաշտ խաղի նշանակված ժամից նվազագույնը 20 րոպե առաջ:

35. Եթե թիմն ուշանում է մարզադաշտ ժամանելու համար սահմանված ժամանակից, ապա պարտավոր է այդ մասին նախապես հայտնել մրցավարին:

36. Եթե թիմը խաղասկզբից 20 րոպե առաջ մարզադաշտ չի ժամանել և ուշացման պատճառների մասին խաղի մրցավարին չի տեղեկացրել, ապա համարվում է խաղին չներկայացած: Խաղի մրցավարը պարտավոր է արձանագրել տվյալ փաստը այդ խաղի արձանագրությունում և չներկայացած թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0-3 հաշվով:

37. Յուրաքանչյուր խաղից 5 րոպե առաջ կազմվում է խաղի արձանագրություն (Ձև 2) թիմերի կազմերի վերաբերյալ, որը ստորագրում են թիմերի ներկայացուցիչները: Խաղի ավարտից հետո խաղի արձանագրության մեջ լրացվում է խաղի արդյունքը և մրցավարի կողմից ներկայացվում է Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժին:

5. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

38. 1-ին տեղը զբաղեցրած թիմը համարվում է «Սպիտակ համայնքի ղեկավարի գավաթ-2022» ֆուտզալի փոխանցիկ գավաթի մրցաշարի հաղթող և պարգևատրվում է գավաթով, 300 000 ՀՀ դրամով, մեդալներով և դիպլոմներով:

39. 2-րդ տեղը զբաղեցրած թիմը պարգևատրվում է 200 000 ՀՀ դրամով, մեդալներով և դիպլոմներով:

40. 3-րդ տեղը զբաղեցրած թիմը պարգևատրվում է 100 000 ՀՀ դրամով, մեդալներով և դիպլոմներով:

41. Մրցանակներ կշնորհվեն «Լավագույն ֆուտբոլիստ» և «Լավագույն դարպասապահ» անվանակարգումներում ընտրված մասնակիցներին, որոնք կընտրվեն Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի ներկայացուցչի և գլխավոր մրցավարի կողմից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ

ՀԱՅՏ

_____

(թիմի անվանումը)

№	Մասնակցի անուն ազգանուն հայրանուն	Ծննդյան թիվ	Անձնագրի համար	Ստորագրություն
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				
7.				
8.				
9.				
10.				
11.				
12.				

Թիմի ներկայացուցիչ _____

(անուն ազգանուն ստորագրություն)

«____» _____2022թ.

Ձև 2

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մրցաշարի անվանումը _____

Անցկացման վայրը _____ ժամը _____

Թիմի անվանում	Թիմի անվանումը
_____	_____
Թիմի կազմը	Թիմի կազմը
1._____	1._____
2._____	2._____
3._____	3._____
4._____	4._____
5._____	5._____
6._____	6._____
7._____	7._____
8._____	8._____
9._____	9._____
10._____	10._____
11._____	11._____
12._____	12._____
Թիմի ներկայացուցիչ	Թիմի ներկայացուցիչ
_____	_____

____ : ____

Խաղի հաշիվը

Խաղի մրցավար _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2022թ. № 425

ԿԱՄՈ ԳԵՎՈՐԳԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,045 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N 28042022-06-0038 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006JQRUFQL) և Կամո Գևորգի Պողոսյանի ներկայացուցիչ՝ Ալվարդ Վոլոդյայի Օթարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Կամո Գևորգի Պողոսյանին (ծնված՝ 08.02.1982 թվականին) սեփականության իրավունքով պատկանող՝ Այգեստան թաղամասում գտնվող, 06-006-0106-0020 կադաստրային ծածկագրով, 0,045 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «ք. Սպիտակ, Այգեստան թաղամաս, թիվ 298» հասցեն (փոստային դասիչը՝ 1802):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունիսի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունիսի 2022թ. № 426

ԿԱՐԱՊԵՏ ԳԵՎՈՐԳԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,031 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ N 1157931 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006KOKJJVT) և Կարապետ Գևորգի Պողոսյանի ներկայացուցիչ Ալվարդ Վոլոդյայի Օթարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Կարապետ Գևորգի Պողոսյանին (ծնված՝ 10.05.1990 թվականին) սեփականության իրավունքով պատկանող՝ Այգեստան թաղամասում գտնվող 0,031 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «ք. Սպիտակ, Այգեստան թաղամաս, թիվ 190 հողամաս» հասցեն (փոստային դասիչը՝ 1802):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունիսի 16
ք.Սպիտակ